

ՀՀ Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի

Ղեկավար Գ. Ներսիսյան

2018 թվականի 2-րդ կիսամյակի և տարեկան

կատարած աշխատանքների

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մասնակցությամբ՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանի ներկայացուցիչ Ա. Ղուկասյանի, համայնքի ավագանու անդամների, համայնքապետարանի, Ոսկեհատի միջնակարգ դպրոցի, մանկապարտեզի, բուժ.ամբուլատորիայի աշխատակիցների, մասնագետների և համայնքի բնակիչների մասնակցությամբ.

31.01.2019թ.

1. Ոսկեհատ համայնքի բյուջեն կատարվել է 113,3%-ով

- ա) Հողի հարկ -103,5 %-ով
- բ) Գույքահարկ -122,5 %-ով
- գ) Վարձակալական հ/հ -101,7%-ով
- դ) սեփական եկամուտներ-105,4%-ով
- ե) Տեղական տուրքեր-165,4%-ով

2. 2018 թվականի ընթացքում համայնքի ավագանին գումարել է 13 նիստ, որտեղ քննարկվել են համայնքի խնդիրներին վերաբերվող տարբեր բնույթի հարցեր, և կայացվել որոշումներ:

3. Կատարվել է փողոցների աղբի հավաքում և հեռացում ամիսը 4 անգամ:

4. Մշտական ուշադրության կենտրոնում են եղել մանկապարտեզի երեխաները, որոնք մշտապես ապահովվել են սննդով և ջեռուցմամբ:

Կատարվել է երեխաներին դպրոց ճանապարհելու և ամանորյա հանդես, հանձնվել են նվերներ մանկապարտեզի, նախակրթարանի և դպրոցի տարական դասարանի երեխաներին:

5. 2018 թվականի ընթացքում վթարվել են տարբեր փողոցների խմելու ջրագիծերը և կոյուղագծերը, որոնք վերանորոգվել են համայնքի ջանքերով:

6. Ժամանակին կատարվել է հացահատիկի բերքահավաքը: Գարնանը ցրտահարությունից տուժված խաղողի և պտղատու այգիների սեփականատերերը մարզպետարանից ստացել են փոխհատուցում:

7. Մայիսի 9-ին կազմակերպվել է Հայրենական մեծ պատերազմի և Լեռնային Ղարաբաղի պայքարի մասնակիցների մեծարման տոնահանդես և տրվել է նվերներ:

8. Ավագանիների որոշմամբ գյուղի անապահով ընտանիքներն հատկացվել է 4.000.000 դրամի օգնություն:

9. Մասնակցել ենք դպրոցի վերջին զանգի արարողությանը:

10. Ամբողջ ուսումնական տարին հատկացվել է ուսանողական անվճար ավտոմեքենա ուսանողներին Երևան տանելու համար:

11. Բոլոր նորածին երեխաների ընտանիքներին տրվում է միանվագ գումար:

12. 2018 թվականի դրությամբ աշխատավարձի և սոց վճարների պարտքեր չկան:

13. Համայնքում աշխատանք է տարվում նոր ցերեկային լուսավորություն անցկացնելու համար:

14. Հաստատված է նոր կառուցվող հանդիսությունների սրահի նախագիծ-նախահաշիվը:

15. Աշխատանքներ են տարվում Համաշխարհային խորհրդի Հայաստանյան Կլոր սեղանի տնօրինության հետ մանկապարտեզի մասնակի վերանորոգման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Չնայած, համայնքի բյուջեով նախատեսված է սոցիալ-տնտեսական

Զարգացման և որոշ ուղղություններով իրականացված միջոցառումների, սակայն կան հիմնախնդիրներ, որոնց լուծումը հնարավոր չէ իրականացնել միայն համայնքի միջոցներով:

ԱՌԱՋՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻՑ Է

1. Լուրջ խնդիր է համայնքի որոշ փողոցների խմելու ջրագծերի հիմնանորոգման հարցը:
2. Առաջնահերթ խնդիր է մանկապարտեզի շենքի վերանորոգման հարցը:
3. Լուրջ խնդիր է գյուղի մայր կանալի հիմնանորոգման հարցը:
4. Մնացել է չլուծված բուժ. ամբուլատորիայի նոր շենքի կառուցման խնդիրը:
5. Առաջնահերթ խնդիր է համայնքի փողոցների ասֆալտապատման հարցը:

Ոսկեհատ համայնքի

Ղեկավար՝

Գ. Ներսիսյան